

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2003թ. հունվար-ապրիլին կազմել են 279136.4 մլն.դրամ, իսկ դրամական ծախսերը 293709.5 մլն.դրամ: Դրանց աճի տեմպերը 2002թ. հունվար-մարտի համեմատ, համապատասխանաբար, կազմել են 109.7 և 112.9 %:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները՝ հանած պարտադիր վճարումները, հաշվի առած սպառողական զների ինդեքսների փոփոխությունները) 2003թ. հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել են 5.6%-ով:

Բնակչության դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքը

(%)

	Տեսակարար կշիռը եկամուտներում		2003թ. հունվար-ապրիլի աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ	Տեսակարար կշռի տոկոսային փոփոխություն
	2002թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլ		
Դրամական եկամուտներ որից օգտագործվել է.	100	100	109.7	-
ապրանքների զննման և ծառայությունների վճարման համար	77.0	80.1	114.2	4.9
պարտադիր վճարումների և կամավոր մուծումների համար	4.2	4.8	126.1	0.8
ավանդների հավելած	-0.4	-0.5	57.4	-2.2
արտարժույթի զնուծ	15.4	14.6	104.3	0.4
այլ ծախսեր	6.1	6.2	110.8	0.3
Դրամական ծախսեր	102.3	105.2	112.9	4.2
Եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ	-2.3	-5.2	-53.8	-4.2

Աշխատանքի վարձատրություն: 2003թ. հունվար-ապրիլին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9000 կազմակերպությունների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 28716 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ավելացել 16.9%-ով: Բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4000 բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 17594 դրամ և 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել է 14.4%-ով, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը, համապատասխանաբար, 38839 դրամ և աճել՝ 17.7%-ով:

Անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի 2003թ. մարտին

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ
Ընդամենը ՀՀ	29728	28403	100.0	100.0	119.9	115.9
Արդյունաբերություն	53040	50086	178.4	176.3	139.4	135.2
Գյուղատնտեսություն	24981	23776	84.0	83.7	133.7	129.3
Անտառտնտեսություն	9177	13931	30.9	49.0	84.3	161.0

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ		Ընդամենի նկատմամբ, %		Նախորդ տարվա նկատմամբ, %	
	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ	մարտ	հունվար-մարտ
Տրանսպորտ	46902	46825	157.8	164.9	106.7	111.4
Կապ	52446	51988	176.4	183.0	97.1	103.8
Շինարարություն	46502	42824	156.4	150.8	109.0	114.9
Առևտուր, հանրային սնունդ	18466	17903	62.1	63.0	110.7	96.0
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	41309	39147	139.0	137.8	132.3	133.0
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13210	13178	44.4	46.4	105.6	104.1
Կրթություն	16432	15580	55.3	54.9	115.0	115.8
Մշակույթ	13621	12703	45.8	44.7	121.5	119.9
Արվեստ	12995	12869	43.7	45.3	110.8	105.6
Գիտություն և գիտական սպասարկում	21720	20895	73.1	73.6	100.2	102.8
Վարկավորում և ապահովագրություն	87367	81268	293.9	286.1	114.1	81.3
Կառավարման ապարատ	43197	42541	145.3	149.8	117.9	117.0
Այլ	28717	26297	96.6	92.6	123.3	111.0

2003թ. մարտին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 43.7%-ից (արվեստ) մինչև 55.3%-ի (կրթություն) սահմաններում: Վարկավորման համակարգում անվանական միջին աշխատավարձն ընդհանուր միջինին գերազանցել է 2.9 անգամ, կապի համակարգում և արդյունաբերության մեջ՝ 1.8, տրանսպորտում և շինարարության մեջ՝ 1.6 և կառավարման համակարգում՝ 1.5, բնակարանային-կոմունալ և բնակչության կենցաղսպասարկման ոլորտում՝ 1.4 անգամ:

2003թ. մարտի վերջի դրությամբ, վերոնշյալ կազմակերպություններում աշխատավարձի ժամկետանց պարտքը (փոխանցված նախորդ տարվանից (ամսից)) կազմել է 16403594.9 հազ. դրամ, այդ թվում՝ հաշվետու ամսում՝ 4833992.9 հազ. դրամ՝ 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելանալով 16.6%-ով: Աշխատավարձի ժամկետանց պարտքի ցուցանիշը շարունակում է բարձր մնալ արդյունաբերության ճյուղում՝ 47%, կրթության ոլորտում՝ 11.9% և կառավարման ապարատում՝ 8.1%: